ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» դեկտեմբերի 2011թ. N_-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏՈՒՀԻ, ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐ ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է*:

Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստուհի, պետական մրցանակի դափնեկիր Լուսինե Զաքարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ե. Կողբացի-42 հասցեում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ՝

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Գ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏՈՒՀԻ, ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐ ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անուրանալի է հայ մեծանուն երգչուհի, Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստուհի, պետական մրցանակի դափնեկիր Լուսինե Զաքարյանի ավանդը հայ երգարվեստի զարգացման և տարածման գործում:

Երևանի քաղաքապետին են դիմել քանդակագործ Հայկ Թոքմաջյանը, Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստ Մուրադ Ջանիբեկյանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը՝ խնդրելով Երևանի ավագանու համաձայնությունը, անզուգական երգչուհու հիշատակը հավերժացնելու նպատակով, նրա ապրած տան մուտքին (Ե. Կողբացի փողոց, 42 շենք, 1-ին մուտք) հուշատախտակ փակցնելու համար:

Ելնելով վերոնշյալից՝ լիահույս ենք, որ սույն որոշման նախագիծը կարժանանա Երևանի ավագանու հավանությանը:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ՝
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Գ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԻՍՏՈՒՀԻ, ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐ ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստուհի, պետական մրցանակի դափնեկիր Լուսինե Զաքարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Գ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏՈՒՀԻ, ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐ ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստուհի, պետական մրցանակի դափնեկիր Լուսինե Զաքարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ՝

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Գ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ